



Նիկոլայ Կառլենի Հովհաննիսյանը ծնվել է 1964 թվականի օգոստոսի 8-ին Երևան քաղաքում:

1981-1984թթ.-ը սովորել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի Ֆինանսահաշվարկային ֆակուլտետի Վիճակագրություն բաժնում, ունի տնտեսագետի որակավորում:

1985-1987թթ. ծառայել է Սովետական բանակում:

Նիկոլայ Հովհաննիսյանը մասնակցել է մասնագիտական որակավորման բարձրացման մի շարք դասընթացների Հայաստանում և արտերկրում:

1987-1989թթ. աշխատել է Գազ. Պետ. կոմիտեի ֆինանսական բաժնում՝ որպես ավագ տնտեսագետ:

1989-1996թթ. աշխատել է Սպանդարյանի շրջանի ֆինանսական բաժնում՝ որպես ավագ տնտեսագետ, այնուհետև Պետական հարկային տեսչությունում՝ որպես գլխավոր հարկային տեսուչ, երկրորդ կարգի պետական խորհրդական:

1996թ.-ին Եվրամիության «TACIS» ծրագրի շրջանակներում Ֆրանսիական Credit Agricole բանկի, Credit Agricole Consultant խորհրդատվական ծառայության, հոլանդական Rabobank և գերմանական DG-Ագրոպրոգրեսս ընկերությունների հետ համատեղ իրականացվել է «ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԲԱՆԿ»-ի ստեղծման եռափուլ ծրագիրը, որի ընթացքում Նիկոլայ Հովհաննիսյանն աշխատել է որպես Արմավիրի մարզի տարածքային կորորդինատոր:

1996թ. մայիսի 1-ից «ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԲԱՆԿ» կոոպերատիվում, ներկայիս «Ակբա» բանկ ԲԲԸ-ում զբաղեցրել է «Արմավիր» մասնաճյուղի պատասխանատուի պաշտոնը:

1999թ. մարտի 8-ից հանդիսացել է նույն բանկի վարչության անդամ, որից հետո նշանակվել է որպես «ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԲԱՆԿ» կոոպերատիվի «Արմավիր» մասնաճյուղի կառավարիչ:

2000-2006թթ. եղել է Բանկի խորհրդի անդամ:

07.01.2003թ.-ից Նիկոլայ Հովհաննիսյանը նշանակվել է «ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԲԱՆԿ» կոոպերատիվի գլխավոր տնօրենի տեղակալ:

09.09.2006-13.07.2015թթ. զբաղեցրել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը:

2015թ. հուլիսի 13-ից Նիկոլայ Հովհաննիսյանը զբաղեցնում է «Ակբա բանկ» ԲԲԸ-ի Գործառնական կառավարման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը:

Ամուսնացած է, ունի դուստր և 2 որդի: